

է. ճակատը երեք դռներ ունի դէպ ի խորան, որոնք վերուստ ի վայր ծածկուած են գեղեցիկ քանդակներով, մանր նախերով. դրանց շեմերը, բարաւորները բանուած են, կամարներն ալ շատ վայելուչ ձև ունին։ Այս կամարներէն դէպ ի խորան մտնողը՝ ակամայ կը հարկադրուի գլուխը վեր վերցընել, մինչև ցտանջել պարանոցի, — ըստ բացատրութեան Թովմայի Արծրունւոյ. — վասն զի բարձրաբերձ պատերը կամարակապ նեղնալով դէպ ի վեր, փոքրիկ կաթուղիկէն իրենց ուսերուն վրայ առած կ'երևնան, որ իւր նեղ պատուհաններէն աղօտ լուսոյ ճառագայթներ կը սփռէ դէպ ի վայր։ Խորանին վայելուչ գոգաձևին մէջ՝ կիսով չափ յորմն ցցուած են խորաքանդակ կիսանդրիք երկօտասան առաքելոց, և ի միջին՝ Փրկիչն։ Այս խորաքանդակ կիսարձաններուն վերայ յայտնի կ'երեւի ճաշակ քանդակագործութեան, որոնք թէպէտ թանձր կրով ծածկուած են, սակայն և այնպէս կրին տակէն եւս կ'երևի չափակցութիւնն և համեմատութիւն, նոյն և վայելչութիւնն. յորոց զուրկ են կողմնակի պատերուն վերայ քանդակեալ Սրբոյն Կարապետի և Լուսաւորչի խորաքանդակք, մարդաչափ արձանք, խոշոր և անարուեստ քերչաց գործ։

Այժմ մեր ազգայինք՝ Ս. Սարգսէ և Հրեշտակապետաց եկեղեցիներէ զատ՝ ունին Ս. Գեորգ ե Ս. Աննա, քաղաքին հարաւային սարին վերայ, և որ ուխտատեղի է, զի հոն թաղուած է ժամանակաւ Լոյս-Պարոն նահատակն։

Քիչ ետքը կարգաւ պիտի նշանակեմք Կաթայի մէջ երբեմն գտնուած ազգային եկեղեցեաց անունները, որչափ ինչ յաջողեցաւ մեզ գտնել՝ մի դար յառաջ գրուած ձեռագրէ մը։ Այլ յառաջ քան զայս